Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի» համար ՖS 2019.

Ստորագրվեց «Կապանի թիվ 8 նախադպրոցական ուսումնական հաստատության վերանորոգման» ծրագիրը

2020 թ. մարտի 23-ին, ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադան և Կապանի քաղաքապետ, պարոն Գևորգ Փարսյանը ստորագրեցին «Կապանի թիվ 8 նախադպրոցական ուսումնական հաստատության վերանորոգման» ծրագրի 85,691 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային պայմանագիրը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում:

Ծրագրի նպատակն է վերանորոգել թիվ 8 նախադպրոցական ուսումնական հաստատության դասասենյակները, սրահները, միջանցքները, պատուհանները, դռները, հատակը, պարտեզը և հաստատության երեք հիմնական շենքերի մի քանի այլ բաղադրիչներ: Այս ծրագրի շնորհիվ, կբարելավվի մանկապարտեզի ուսումնական և աշխատանքային միջավայրը, ինչպես նաև կրթության և սոցիալական կյանքի որակը՝ սանիտարահիգիենիկ չափանիշներին համապատասխան, ինչպես երեխաների, այնպես էլ ուսուցիչների համար: Արդյունքում, 140 երեխաներ, 230 ծնողներ և 29 ուսուցիչներ (ընդհանուր 399 անձ), օգուտ կքաղեն այս ծրագրից: Ավելին, այս ծրագիրը նաև հնարավորություն կընձեռնի հաստատության մուտքի մոտ ապահովել թեքահարթակ՝ հաշմանդամություն ունեցող երեխաների, ծնողների, ուսուցիչների և այցելուների ազատ տեղաշարժման համար: